

ՔԱՏԱՆՈՐԴԱԿՐՈՒԹԻՒՆ
 Պոլիտիկոյ համար
 Տարեկան 10 Փր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՍԻԿ ՎՃԱՐԵԼԻ
 —)(—
 Գրութիւնք եւ չեւե սրտիւր
 —)(—
 Իրանցական տոյր 20 սակ-
 քիւն Կ. երեկեւ աւելի աւ-
 զաններու համար 20 Օլ
 զեղջ կըլայ :

ՇԱԲԱԹ

Նախակ եւ դրամ դրկի
 Խմբագրութեան հասցիին.

Редакция на вѣстникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ.
 АДВОКАТЪ

ՀԱՅ ՍԻՏՔԸ ԵՒՐՈՊԱ

—)(—

Կարծուածէն աւելի շատ բան կը պարտինք մեր ան հանճարուոր աղգակիցներուն, որոնք թառած քաղաքակրթեալ եւրոպայի մէջ մէկ անկիւնը հըռչակի ցոյժունքներ կարձկեն, միտքի ուժ, ձեռքի ճարտարութիւն, իմացականութեան թաղուն խաւեր պարզելով օտարներու աչքին: Աս երեւոյթը գերազանցապէս ցոյց կուտայ ազգի մը հուժկու կազմուածքը, որ ինչքան ալ խախտի, քայքայուի, յամառօրէն կառչած էր մնայ իր դարուոր կոծրացած խորխորներուն վրայ, զայրուելով պրկուելով բայց տոկալով միշտ իր շուրջը յարուցուած մեծ ալեկոծութիւններուն մէջտեղ:

Իարիկ այս օրերս սփոփանքներ կուգայ ալ մեր տրամաթախիձ, կերպով մը անհանդուրժելի ու մանաւանդ միօրինակօրէն անհանդարտ կեանքին, հայ հանճարի պատմութիւններ բերելով, ճիշդ ինչպէս կըլլայ յիշակարճ զովաշունչ անուշ զեփու մը արեւադարձային տաք անշարժութեան մէջ:

Եւրոպայի լուսաւորութեան օրրանին մէջ հայ երիտասարդներ՝ բախտէն հոն քշուած, տաղանդ ու փառք կը փորձեն, զարմացնելով դժուարահաճ ֆրանսացին, հայ անունը՝ չգիտցողներուն մտքին մէջ տպաւորելով այնպէս մը որ ալ չելլայ, արուեստի ուժով զգացումներ յուզելով:

Երուանդ Մանուէլեանէն, Զօպանեանէն ու Զաքարեանէն ետքը Գալֆանեան ու Սվաճեան չեն թողուր որ ազդեցութիւնը պազի, հայ անուան յիշատակութիւնը մնացուի, ու «հայ» բառը փոխանակ զարգ, կողոպուտ, բռնութիւն, գաղթականութիւն, եւայլ տխրահունչ բառերուն առջեւ երեւնալու, փայլունօրէն պատշաճի «գիտութիւն, արուեստ, գեղարուեստ, տա-

ղանդ» բառերուն ետ մենք ալ հրճուողին սփոփանք մը զգանք՝ եթէ ոչ մօտէն տեսնելով, զէթ հեռուանց մտիկ ընելով այս ներգաշնակ լուրերը, նոյնքան քաղցր որքան Սվաճեանի մեղեդիները:

Սրտի անսահման ճմլում մը ունեցած եմ ամէն անգամ երբ տեսած եմ օտար լրագրութեան կամ գրքերու մէջ աղգային տաղանդներու կամ երեւելի անձնաւորութիւններու յիշատակութիւնը առանց «հայ» տիտղոսին: Օր մը բարկութենէս պատուեցի ֆրանսերէն բառգրքի մը ան էջը ուր Այվազովսքին յիշուած էր սապէս «Երեւելի ռուս ծովանկարիչ»:

Տգեղ ու ըմբոստեցուցիչ չէ՞ հայ սոհմին փառքերէն մէկը յանկարծ սլաւացնել: Միշտ այսպէս եղած է սախայն: Նարոյնի ժամանակակից Իակրատին երեւելի հայ զօրավարը միեւնոյն կերպով կը յիշատակուի պատմութեան մէջ. թերթեր կան որ եգիպտացի կըսեն նուպար փաշին, պարսիկ՝ Մեկրոն խանին: Այսպէս, զոնէ մեր տաղանդները մեղի մնալու միթիթալութիւնն ալ չպիտի վայելնք: Ռուսը, պարսիկը, լեհացին ասանկ ի՞նչ փառքեր խլած գողցած են մեր ձեռքէն: Հո՞գ ընելիք բան է ասիլա. պէտք չէ թողունք որ ինչպէս մեր հայրենիքը, տունը, տեղը, ինչքը, պատիւը անխղճօրէն կատուեցին կողոպտեցին, մեր աղգային ձիրքերուն, իմացականութիւններուն վրայ ալ սրբապիղծ ձեռքեր երկինան:

Ասանկ կըզձայ անշուշտ ամէն հայ. բայց մինակ ըզձալը օգուտ չընէր. մենք օտարէ՛ն աւելի ազգի գիտնալու ենք գնահատել ու քաջալերել մեր գիտնականները, արուեստագէտները, գրագէտները, որոնք, փոխադարձաբար, երախտագիտութիւն մը պիտի ունենան, ու միշտ հոգեւին փարած պիտի մնան աղգայնութեան գաղափարին՝ փոխանայ օտարութեան շլացումներէն համարուելու:

Պէտք չէ, օրինակի համար,

թողուլ որ Սվաճեանի նուագահանդէսին հայէն աւելի ֆրանսացի երթայ, մինակ ֆրանսացին ծափէ, ու հայ արուեստագէտն իր շուրջ միայն օտար փառաբանութիւն մը տեսնայ. պատիւ չըրերիք բան է ասիլա՝ մանաւանդ ֆարիզի պէս տեղ մը ապրող աղգակիցներու համար, որոնց ճաշակը, միտքն ու ըմբռնումը այլապէս սրուած կը նըկատուին:

Եթէ չենք ուզեր որ մեր տաղանդները մենէ օտարանան, պարտաւոր ենք հայ մթնոլորտի, հայ շնչի մը տաքութեանը մէջ պահել զանոնք յարածամ:

Ու ան ատեն ուր որ ալ ըլլայ, հայ հանճարը հայ կը մնայ ու միայն կը ծառայէ հայութեան անունը պանծացնելու:

ՇԱԲԱԹ

ԵՐԿՏՈՂ ՍԸ Պ. ԱՐՓԻԱՐԻՆ

—)(—

Պ. Արփիարեան այնքան ճարտարօրէն կը գրէ որ միշտ կասկածանքով եւ զգուշութեամբ վերաբերուելու է իր «Թուարանական հաշուով» գրուածքներուն մասին, առանց ճշկուելու ոճի մը դարձուածքներէն անխորհրդաբար յափշտակուելու: Եւ սակայն Մարտի վերջին թիւին մէջ երեւցած «Ռ՝վ եղբայրասպան» յօդուածը իր լաւագոյն գրութիւններէն չէ եւ նոյնքան ձախող է որքան «Ինչո՞ւ վասպուրականը» անխորհուրդ (՝) յօդուածը որուն անհեթեթութիւնը ա՛յնքան տրամաբանօրէն տարրալուծեց մեր արդոյ աշ-

(՝) Այս կամ այն վայրը շարժման ասպարէզ ընտրելու խնդիրը յեղափոխական ամենամեծ գաղտնիքներէն մէկը ըլլալով, հրապարակային ուսումնասիրութեան նիւթ չի կըրնար կազմել: Բայց Պ. Արփիարեան պատմեան այս անհրաժեշտ սկզբունքը՝ հետզհետէ իր թերթերուն օրուան խնդիր կը դարձնէ յեղափոխութեան ներքին ճրագիրները: Եթէ իրօք Պ. Արփիար կը փափազի անկեղծօրէն մշակել յեղափոխական ձեռնարկներու ուղղութիւնը, պէտք է մի անգամ ընդ միշտ գիտնայ թէ յեղ. մարմիններու զաղտնի բանակցութեամբ միայն կրնայ կատարուիլ այդ բանը:

խատակիցը՝ կարին: «Ռ՝վ եղբայրասպան»ին մէջ թէեւ Պ. Զօպանեանի պէս չէր հայտնած, սակայն կիրքէն մոլորած՝ ողորմելի տրամաբանութեան մը վրայ հիմնած է իր ըսածները եւ նոյն իսկ բառախաղեր գործածած, ինչ որ կուսակցական մը լրջութեան ընաւ չի վայելեր:

Իր յարուցած «Եղբայրասպան կըրուներուն» մասին, քանի մը արդարացի գիտողութիւններ ըրած ըլլալուս համար, մեզի «գրօշակի-մասնաճիւղ» կանուանէ, մոռնալով թէ հնչակեաններու վրայ եւս գովեստով խօսելու ատիթը չէ փախցուցած Շարժում, որով Պ. Արփիարի տրամաբանութեամբ, պէտք էր «Հնչակի-մասնաճիւղ» տիտղոսով ալ օժտուէինք: Իրողութիւնը սա է որ Պ. Արփիարի կարծիքը ինչ ալ ըլլայ, Շարժումի ընթացած ուղին խափանելու չպիտի զօրէ: Շարժումի ուղին որոշ է եւ պարզ. թագուն նըպատակներով ազգ. փրկութեան գործը տապալելու աշխատողներէն հըրապարակ մաքրել. եւ միւս կողմէն համերաշխութիւն գոյացնել միանըպատակ կուսակցութիւններու մէջ, գործին սիրուն եւ յեղափոխութեան երգուեալ թշնամիներուն ձեռքէն «միութիւն չկայի» զէնքը խլելու համար: Այս նշատակով էր որ Շարժումի հրատարակման առաջին օրէն իսկ առանց կուսակցական խորութեան հրաւիրեցինք շատ աղգասէր երիտասարդ գրողներ մասնակցելու Շարժումի, որուն էջերը միշտ բաց պիտի մնան ամէն հայու որ օգտակար բան մը ունի ըսելիք տառապեալ ազգին: Աս պատճառաւ էր որ խնդրած էինք Պ. Զօպանեանի եւ ուրիշներու աշխատակցութիւնը:

Կը կրկնենք թէ մեր իղձն եղած է որ անցեալի սխալներէն օգտուելով գործունէութեան նոր ուղի մը գըտնենք մեզ եւ անոր մէջէն ընթանանք ամէնքս միահամուռ, իրրեւ նոյն նպատակի ծառայողներ, իրրեւ զաւակները նոյն թախծագին հայրենիքին որ իր փրկութիւնը մեզ ամէնէս կակնկալէ:

Եւ անա Պ. Արփիար մէջտեղ կեցած է իր գրչով, իր հաշիւներով եւ միջոց գտած է մոռցնել տալու գործ, հայրենիք, դատ եւ ազգը համօրէն զբաղեցնել «հին պատմութիւններով, պատուոյ ատեանով», վերջապէս սա մեծ հարցով թէ ինք «դաւաճան է թէ ոչ»:

Հրանդի եւ Թափառիկի գրուածքներէն ետքը, որոնք անշուշտ իրենց կշիռը եւ նշանակութիւնը ունին, ներքի է անշուշտ անոնց որ բարեկամական մոլեռանդութենէ զերծ, պաղարիւն խորհելու կարողութիւն ու-

նին, կասկածելու, կիմանա՞ք, առ այժմ միայն կասկածելու թէ զուգ մարդկային տկարութեան վայրկեանի մը պահուն, ձեր ուզածէն աւելին խօսած էք Ոստիկանութեան Դրան մէջ, եւ դժբախտութիւններու տեղի սուած: Արդ, ո՛չ մէկ յեղափոխականի ներքին չէ սովորական մահկանացուի տկարութիւններուն ենթակայ ըլլալ. երկաթ է եւ կրակէ շաղախուած մարդ պէտք է ըլլայ անոնց էն յետինը... ո՛ւր միայն կուսակցապետ մը:

Այդ կասկածը կը բաւէ: Գիտենք թէ Նազարպէտի անկման շարժառիթը նիւթական զեղծումներու կասկածը եղաւ: Կասկած մը բուսական եղաւ. որ այդ մարդը Հնչակեան կուսակցութեան մեծ մասին համար անկեալ նկատուի: Համաձայն: Ըսել է թէ սկզբունքով պէտք է ընդունինք որ յեղ. կուսակցութեան մը զլուրը գտնուող մը անպայման կերպով զերծ ըլլալու է նոյն իսկ ամենափոքր կասկածէ՝ ո՛ւր միայն դատաւարութեան կասկածը:

Հետեւաբար, Պ. Արփիարի պէս կասկածելի անձի մը Հնչակեան կուսակցութեան մը զլուրը գտնուիլը աններելի եւ անհասկնալի է:

Եթէ Պ. Արփիարի ազգասիրական պարտք մը կատարել կը փափագի, փութալու է ժամ առաջ հեռանալ Հնչ. կուսակցութենէն եւ իբրեւ ազատ մէկը՝ անհատական թերթ մը հիմնելով պայքար մղել իր անձնական թշնամիներուն դէմ, առանց սկանչ կատելու պաշտօնի վրայ մընալու համար իրեն եղած քաղաքավարական ցանցառ խնդրանքներուն:

Արդի վիճակին մէջ մղելով այդ անձնական պայքարը, եղբայրասպան կուրի մը կը վերածէ զայն. հայը հայուն դէմ կը հանէ, միութեան ամէն կարելիութիւն անհնարին զարծնելով. եթէ չէք հաւատարմ, զատեցէք այն ցաւալի գծաութիւններէն, իրարանցումներէն որոնք յեղ. գործին անելի հարուածներ տալէ տարբեր օգուտ չունին:

Իբրեւ ազատ անհատ գործելով,

նաեւ նուազ գաղապարտելի պիտի ըլլայ ուսանալներու դէմ պայքարը, զոր այժմ բացած է պաշտ. օրկանի մը մէջ: Այնպիսի սեւ գոյներով կը նկարագրէ զանոնք որ կարծես թէ Բաֆֆիներու, Պատկանեաններու, նալպանեաններու հայրենակիցը եղած չըլլային, այլ հայաստանց հրէշներ:

Կուսակցութիւնները հերձելէ ետքը, ազգին երկու մեծ զանգուածները իրարմէ անջատելու այս ջանքը ո՛չ միայն անգամ մըն ալ կարողարարէ, այլ կը յաւերժացնէ իր ճակտին վրայ «պատակաւոր սպի» մակդիրը, զոր բացարձակ իրականութիւնը առաջին օրէն ներշնչեց մեզ:

Ի՞նչ, այս բոլորը ամբողջ կուսակցութեան համամասութիւնովը ի գործ կը դնէ Պ. Արփիարի: Ահա բան մը, որուն երբեք չպիտի հաւատանք, որքան ալ «թուարանական հաշիւով» գրէ ինք: Մեր համարումը, ինչ աւնայառ եւ ճշմարիտ գործիչներու վրայ, չի ներեր մեզի նոյն իսկ այդ սեւ ենթագործութիւնը ընելու:

Հետեւ չէ այն ժամանակը որ սնունք ալ Պ. Արփիարի «թուարանական հաշիւներուն» խորը յեղափոխութեան գործը փճացնելու նպատակը բացորոշ պիտի տեսնեն: Երանի՛ թէ շատ ուշ չըլլար:

ՀԱՅ ԱՐՈՒԻՏՍԱԳԷՏՆԵՐ

—)(—

Տաղանդաւոր հայ ողբերգու Պ. Կարապետ Գալֆանեանի մասին «Առմէնի» սուղէս կը գրէ:

«Յունիս ԻՊէն, Պ. Կարապետ Գալֆանեան թէպէտ Մօնտէնի մէջ հայ լեղուով ներկայացուց համալէթի մէկ արարուածը. իր մօր հետ ունեցած այնքան սրտայոյզ սեւարանը: Երիտասարդ ու համակրելի ողբերգուն՝ այնքան լաօժառուած ընթերցանէն, շերմապէս ծախահարուեցաւ բազմաթիւ ու ընտրեալ հանդիսականներէն:

Շքեղ գլուխ մը՝ առիւծի բաշով, նրբաձիգ ու հոյակապ հասակ մը, մեղմամղձիկ սոփոնուութիւն մը, աննման գլխաշարժութիւն մը. Պ. Գալֆանեան ունի բոլոր աս ձիրքերը, որոնցմով կրնայ սքանչելապէս մարմնացնել Շէքսպիրի գլուցապնը: Ատոնց վրայ աւելցընելով զննութեան եւ ուսումնասիրութեան անհրաժեշտ յաւելումը, մեր հայրենակից շատ չանցած պիտի հաւատարի Պետրոս Ազատեանի փառքին եւ պատուաւոր տեղ մը պիտի բռնէ Անդրիոյ էն մեծ որբերգակ բանաստեղծին օտար թարգմանիչներուն մէջը»:

«Ժուռնալ տէ Տէպա», հայատեայ թերթը, հետեւեալ տողերը կը գրէ երեւելի հայ դաշնակահար Պ. Սվաճեանի մասին:

«Երիտասարդ հայ դաշնակահար մը, Պ. Սվաճեան, չորեքշաբթի իրիկուն Լուառի սրահին մէջ գեղեցիկ նուագահանգէս մը տուաւ որուն յայտագիրն ինք աւանձին կը լրացնէր եւ ուր հետաքննեց ծախահարուեցան իր ամբարձիւթիւնը, սքանչելի աւելին մը ու զարնուածքի զօրեղութիւն մը՝ Պէթովէնի, Եուստի, Եօբէնի, Ռուպինշթայնի եւ Լիսիթի զանազան հատուածներուն մէջ: Այս փայլուն երաժիշտ ոչ նուազ գնահատուեցաւ մէկ քանի հայկական եղանակներու մէջ զորս ուրիշ եղանակաւորած է, մանաւանդ անուշ ու մեղմամղձիկ «միլիթ»-ի մը մէջ ուր ունկնդիրները ամենամեծ հրատարակ գտան, եւ այս երեկոյթի այսպէս կրկնակի կերպով նպատաւոր եղաւ Պ. Սվաճեանի համար»:

Մարդ երբ աչքի առչեւ կուսնայ օտար զգացումէ բխած այս գնահատումը, պժպանք լոկ կղզայ Շահ-Մէլիքեանի պէս հայ գրողի մը համար, որ միեւնոյն նուագահանգէսը նկարագրել ուզած է «Նոր-Գարո»ի մէջ, խնդ ու խելառ բաներ ըսելով:

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Յիւն-Եւրոպ, 20 Յունիս

Մեր ազատութեան լոյսը երբ անյուսուցեան մութ ամպերուն ետեւը կը սքօղուի, Խաղաղականի անհունութեան մէջ կորսուող Փիլիպպեաններու ժողովուրդին համար ազատութեան արշալոյսը ծագելու շատ մօտ է. թերեւս այս նամակը չը հրատարակուած արդէն անխաղաղութիւնը սպանիական լուծէն:

Ամերիկացիները իրենց արկունի գնով Բուպայի ազատութիւնը եւան գնելու, իսկ հիմակ քանի մը կաթիլ աւելի թափելով... ուրիշ երկրի մըն ալ ազատութիւնը կը գնեն:

Այս իրիկուն Փիլիպպեան կըղզիներէն հասած լուրերը շատ յուսահատական են սպանիացիներուն համար: Յեղափոխականներուն բանակը պաշարած է Մանիլան, աւելի քան 3,000 սպանիացի զերի բռնուած են ապստամբներէն, հազարաւոր սպանիացիներ ջարդած են բնիկները: Սպանիական կառավարիչը ուժասպառ, յուսահատ վաղը միւս օր պիտի գիմէ ամերիկեան ծովակալ Տուրին որ կղզիներուն պաշտպանութիւնը ինք վրան առնէ. կառավարիչը եւ սպանիական կառավարութիւնը կը նախ-

ՎԱՐԳ-ՊԱՏՐԻՎՈՒԹ ԹԵՇՍԱԿԱՐԱՆԸ (21)

Բ.

Օգոստոսի 15ին հասայ Պօլիս եւ իմաց ինձ յանձնարարուած հիւրանոցը Գալաթիոյ: Առաջին գործս եղաւ սեանիկ Արփիար Արփիարեանի հետ, որ ներկայացուցիչ էր համարվում Պօլսի աչքի ընկնող երիտասարդ գաղապարէի, եւ բանակցութիւններ մէջ էր գտնվում մեզ հետ միանալու համար: Այդ բանակցութիւնը կատարել էին նշան կարապետեան, Մ. ... եւ ուրիշներ. սակայն զեռ չէին վերջացրել եւ ևս լիազօրութիւն ունէի գրանց հետ վաղվղելու եւ ուզածի պէս, ինչպէս կուսակցութեան պատիւը եւ շահերը միշտ աչքի առաջ ունենալով:

Այդ խումբի միակ ցանկութիւնը էր յեղափոխականներն ունենալ իրան արամադրութեան տակ եւ իր ուզածի պէս վարել, սակայն առանց մի զուտ յեղափոխական գործ յանձն առնելու: Մի քանի օրից ևս համոզվեցի որ այդ ցանկութիւնը զլիսաւորապէս Արփիարիներ էր:

Արփիարի հետ ծանօթացանք մի հիմնարկութեան մէջ. նա կեղծ սի-

րալիը ժպտով ինձ հաղորդեց որ թէ մենկից եւ թէ Տրապիզոնից իմ մասին արդէն իրենց գրուած է. հենց առաջին վայրկեանում հիւսափակեցի. Կովկասում երեւակայածը Հայկակը, Կուրեանին սպասակող Արփիարեանը չէր: Ես Արփիարեանին երեւակայում էի իբր մի խրոխտ, մարդու աչքերի մէջը ուղիղ նայող, ազատ շարժուածքով, որոշ եւ կտրուկ խօսող մարդու, մի խօսքով իբր Պօլսի Արթուրու: Բայց ընդհակառակը դուրս եկաւ: Նա թողեց ձկուն, կեղծ, սիրան ու հողին բարեկամի եւ օտարների համար երկաթէ կեղեւով պատած մի մարդու աչքեցութիւն, որի հետ ընկեր գտնուալը եթէ ոչ վտանգաւոր, գոնէ կասկածելի էր...

Որչափ ջանացի ուղիղ նրա աչքերի մէջը նայեմ եւ հասկանամ թէ ի՞նչ կայ այդ մարդու սրտի խորքում, անկարելի եղաւ. ոչ ինքն էր ուղիղ նայում եւ ոչ էլ ինձ յարմարութիւն տալիս իրան նայելու: Նա միայն կողմնակի հայեացքներով էր ուզում ինձ լաւ դիտել, եւ միամիտ ձեւանալով նրան թոյլ էի տալիս այդ մանէզվը անել. սակայն յանկարծ ուղիղ երեսին էի նայում:

Կարծեմ հենց առաջին վայրկեանում երկուսս էլ հասկացանք որ իրար չը պէտք է համակրելինք: Եւտով նա ցոյց տեց եւ իր անպայման վախկոտութիւնը, զանազան պատճառաբանութիւններով: Իսկոյն առաջարկեց ինձ ֆէս դնել, միշտ կողացած շապիկ հագնել, մազերս եւ մօրուքս կարճ պահել: Կարծես Պօլսում էլ հայ երիտասարդ չը կար որ ինձ նման էր հագնում:

Չեմ կարող ուրանալ որ իսկապէս Արփիարը իր բոլոր ընկերներէրց աւելի խելացի, աւելի զարգացած եւ լաւ գրող էր: Նա իր ձկուն եւ սուր գրիչով կարողանում էր բուսական վառ կերպով արտայայտել շատ սովորական ազատ գաղափարներ որոնք տաճկահայերի համար նոր լիներով մեծ սպաւորութիւն էին թողնում այն հայ երիտասարդութեան վրայ, որ Տաճկաստանից երբեք չէր հեռացել եւ հայերէն խօսքերով այնպիսի բաներ չէր կարողացել: Նոյն օրը ծանօթացայ Արփիարի սիրելիներէրց միին հետ, որը նրա աչակերտն էր գրական սպարդղում. այդ պարտնը, որը նոյնպէս յեղափոխութեանը համակրող խմբակի մէջ էր եւ աւելի տաճկական բողոքի գեղարվեստ քննաճու ազու հայեացք

ու դէմք ունէր քան յեղափոխականի, բողոքովին անսրոշ սպաւորութիւն թողեց ինձ վրայ:

Արփիարի միջոցով ծանօթացանք իրիցս միայն մի երիտասարդ փաստարան եւ մի վաճառական լաւ սպաւորութիւն թողեցին, նոյնպէս եւ Մ. Գ. ... Փաստարանը անկեղծ, սուր եւ լուրջ մտքով, Արփիարից էլ աւելի զարգացած երիտասարդ էր եւ հենց առաջին օրիւրում այդ մարդուն ինձ մօտիկ զգացի եւ այդպէս էլ եղաւ. վերջը Արփիարեանների կողմից նա մեկ հաւասար ընկեր առաջարկվեց եւ մենք էլ շատ սիրով ընդունեցինք: Վաճառականին այլ եւս չը հանդիպեցի. իսկ Մ. Գ. ի հետ շատ մտերմացանք, որի ամենամեծ առաւելութիւնը, մաքրութիւնը եւ իսկապէս հայրենիքի եւ հայ ժողովրդի համար ցաւող ու տաք սիրտ ունենալն էր:

Չը խառնելու համար աւելի լաւ եմ համարում այս խումբի հետ միանալու ինչպէր վերջացնել եւ ապասկսել իսկական ընկերներու մասին խօսել: Ուրեմն շարունակեմք:

(Շարունակելի)

ընտրեն ամերիկեան ծովակալին անձնա ուր ըլլալ քան յեղափոխականներուն, որոնք քաղաքին տիրանալուն պէս անխնայ պիտի ջարդեն ամէն սպանիացի, իրենց արդար վրէժը լուծելու համար:

Ամերիկացի ծովակալը արդէն գրէթէ աէրն է Փիլիպպիններուն մինչև հիմակ կղզիներուն կոտորածները ձեռքը չառնելուն պատճառն էր իր արամազը թեան սակ եղած նաւատիրներուն սակաւութիւնը. սակայն այսօր վաղը Ամերիկայէն մեկնող բանակները կը հասնին Մանիլա. երեք շաբաթ առաջ Բալիֆօրնիայի նաւահանդիսաէն մտաւորապէս 5,000 զինուորներ, քանի մը փոխադրանաւերով, զրկուեցան ծովակալին օգնութեան. և շաբաթ մը առաջ նոյնչափ օգնութիւն մըն ալ մեկնեցաւ, որ երկու շաբաթէն կղզիները կը հասնի. իսկ այս օրերուն երբորդ բանակ մըն ալ պատրաստուելու վրայ է ու 4-5 փոխադրանաւեր, մարտանաւերու առաջնորդութեամբ, պիտի զըրկուին Փիլիպպինները:

Ամերիկեան յուշումը մոզս վարդը և զօրաւոր մամուլը կը խնդան զերման կայսեր զառանցանքներուն վրայ, որ կուզէ կամ խաղաղութիւնով և կամ զինուորով Փիլիպպինները կղզիներէն ինքն ալ բաժին մը ունենալ. զերմանական շատ զօրաւոր հինգ մարտանաւեր խմբուած են Մանիլայի ջուրերուն մէջ, իբրև թէ երկրին մէջ զերմանական շահերը պաշտպանելու համար: Ամերիկեան ժողովուրդը վերջին ծայր յուշումով է Գերմանիոյ այս ընթացքին

գէտ, և մամուլը կամ իպէ կառավարութիւնը որ հասկնալի և ազդու լեզուով ազդարարէ Վիլհելմի ձեռքուն թէ ծովակալ Տուին գրաւած է Փիլիպպինները Ամերիկայի համար, կղզիի ժողովրդեան պիտի արուի ներքին ինքնավարութիւն ու Ընքը Սամը երկրի գերագոյն տէրը պիտի ըլլայ. և թէ Գերմանիան չի յօժարի ասոր, լաւ կըլլայ որ Ընքը Սամը իրեն ալ դաս մը տայ երբ Սպանիան կրթելու վրայ է. վերջին հեռագիրները լուր բերին թէ Վիլհելմի կառավարութիւնը Ամերիկայի անկեղծ բարեկամն է ու անհիմն են այն լուրերը իբր թէ զերմանական մարտանաւերը պիտի գլխադրեն ծովակալ Տուին Մանիլան զըրաւելուն:

Երկուշաբթի արշայոյսին, ծովակալ Սամընի նաւատորմի զորութեանը է Սանթիակոի—Քուպա—ամբողջները, որոնք բոլորովին հիմնադրուած են: Սպանիացի ծովակալ Սէրվէրա որ Սանթիակոի նաւահանգիստին մէջ պատարած է, գնտակ մը անգամ արձակած չէ ամերիկեան նաւատորմի զորայ:

Տակալին կեանքի կորուստ ունեցած չեն ամերիկացիները. մինչև հիմակ 15-20 մարդ հազար մեռած ու վիրաւորուած են, բայց ամէն օր զուտ 1,000,000 տոյար ծախս կըլլայ պատերազմին համար: Անցեալ օրուան Սանթիակոի ուժերուն համար 400,000 տոյարի արժողութեամբ ուժերը և գնտակները սպառած են ամերիկացիք: 25,000 զինուոր վաղը իրիկուն կը հասնին Սանթիակո, ծովակալ Սամընի նաւատորմի զ

արդէն բերդերը տակն ու վրայ ըրած ու սպանիական զինուորները ետ մղած է: Ամերիկեան բանակը վաղը ցամաք կընկնուի կը տիրէ Սանթիակոի: Քուպայի այս մասը գրաւելէն ետք, Սամըն պիտի ուժեղանայ Փուրթու. Ռիքոն, հոն ալ ամերիկեան բանակ մը ցամաք պիտի ելլայ. անկէց ետքն է որ ամերիկեան նաւատորմի զորութիւնը բերդերն ալ ջարդու փշուր պիտի ընէ ու Ընքը Սամը ցամաքային բանակը պիտի գրաւէ Քուպայի մայրաքաղաքը: Թ. Չ.

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՄՍՏՆՈՒԹԻՒՆ «ՏԱՐՈՍ»Ի

Անտարակոյս ամէն հայ անպատում զղուսներով և խորին ցաւով համակուեցաւ «Տարոս»ի 17 րոգ թիւին մէջ կարգաւով ամէնէն ցած ու ամէնէն անողորմատնութիւնը զոր այդ անամթ և ամէն խղճահարութեանէ զուրկ թերթը մինչև հիմա ի գործ դրած ըլլայ:

«Տարոս» ամէնէն լիբր յանդգնութեամբ, արհամարհելով հասարակաց կարծիքը, ստանկոխ կընէ ամէնէն նուիրական բանը՝ յեղափոխութիւնը, և իբր ճշմարիտ Յուդայ մատնանիչ կընէ հայկական յեղափոխութեան ամէնէն մեծ և յարգուած դէմքերէն մէկը: Այդ փողոցային թիւերուն մէջ լրտեսի մը հետաքրքրութիւնով հրապարակային հարցումներ կողդէր, թէ «ո՞վ է վարդ-Պատրիկով, ո՞ւր է հիման» և այլն: Ասկէց առաջ այս անհեթեթ հարցումներ ընելով կը բաւականանար, բայց վերջերս երբ այլ եւս գիմակը վար առ

նուած ըլլալով ալ բացարձակ մատնիչութիւնը իր «համարսին» վրայ բան մը չէր աւելցնէր, չվարանեցաւ յայտարարել որ իբր թէ վարդ-Պատրիկովը Տ. Արվախի իսակը եղած ըլլայ: Նոյն իսկ ենթադրելով պահ մը որ վարդ-Պատրիկով, այսինքն ուս և թուրք կառավարութիւններէ հաւասար ուժգնութեամբ փնտրուած մէկը, Տ. Արվախին եղած ըլլայ, յուզած մը զատ ո՞ր հայը պիտի ընէր այդ բացարձակ մատնիչութիւնը:

«Տարոս» ըստած ազգագաւ, մատնիչ և դաւաճան թերթին մասին մեր կարծիքը շատոնց յայտնած ըլլալով չենք ուղեր վերադառնալ այդ կէտին:

Մինակ անհնարին է մեզ մեր խորին ցաւը չյայտնել պուլիար փաստարան Պ. Տրակուլէֆի որ, անդիտօրէն, անշուշտ բարիք մը ընելու գիտումով, գործիք դարձած է ժամանակիս ամէնէն ցած, ամէնէն արհամարհելի թերթին, և որ հակառակ իր հայտնէրի համարսին, այսօր հայտն ազգ. կեանքին, հայ յեղափոխութեան դէմ զինուորով անգիտակցարար, մինչև իսկ հըրապարակային մատնութեանց նախաձեռնարկ հանդիսանալու տխուր հարկին մէջ կը գտնուի:

Մենք ապահով սակայն թէ Պ. Տրակուլէֆ բնաւ սեղեակ չէ դժոխային պարունակութեանը այն թերթին որուն պատասխանատուութիւնն ստանձնած է, և լոկ իր համարուէն զինքը ճանչցած ըլլալով բնաւ չենք կարծեր որ համամիտ եղած ըլլայ այդ թերթին մէջ սկիզբէն ի վեր գրուածներուն. այս պարագային մէջ, թերթը խմբագրողներուն կողմէ փտահութեան ահուկ զեղծում մը կայ, որուն հաշիւը օր մը անշուշտ պիտի սան Պ. Տրակուլէֆի՝ եթէ ան վերջապէս ուշաբերի՝ իր անունն ու պատիւը պաշտպանելու համար:

ՏԻՈՒՐ ԷԶԵՐ

ՎԱՆԷՆ ՆԱՄԱԿ

—)(—
Բ.

Դիմացս դանուած չէնք պատճապարած էր երեսուն երեք հայեր, որոնցմէ մէկը մահացու կերպով վիրաւոր. խումբ մը խաւանքի զանոնք կը շրջապատէին: Անգլիական հիւպատոս Պ. Ուիլեմս հոն գնաց շիւպատարան փոխադրելու համար պաշտուածները, որոնք, սխալ տարածաշուքներէ խաբուած, համոզուած թէ ամերիկեան հաստատութիւնները յարձակուած կրած և կողպտուած էին, թէ անգլիական հիւպատոսարանը վտանգի սակ էր, մերժեցին իրեն հետեւիլ: Եւ սակայն հիւպատոսը ձեռնընտռու ստաւ վիրաւորը, զոր երկու երկուստարդներ պատգարակով մը սպարին, խօսք տալով որ իրիկունը եւ պիտի զըրկուէին անոնց քով որոնք կը յամառէին մնալ:

Աւաղ, երբոր դարձան, պարտեզը ուր եւ նստած էի, լեցուած էր

թաղին հինգ հարիւր կիներովը և երախաներովը, որոնք կազմակերպէին, կաշխարակէին, մեռելներին կողորային: Իրենց զօրախա ընկերները որոնցմէ բաժնուած էին կէս օրէն իբր երկու ժամ ետքը, շարժուած էին և տունն ալ հրկիզուած էր:

Այ կողմը, ինչ ասանքսինք քայլ հետո, պատուհան մը կայ, ուսկից զուրս պարակը նետուած էր ստանալը խանջէրի հարուածներով սպաննուած: Նոյնպէս ետիս, հետուն, ինծի ցոյց տուին այգիով մը անշատուած կիսաքանդ տուններ, որոնց տեւրակները որբեր և այրիներ միայն կը պարուենակեն:

Ոտքի կելլեմ հալածուած այս յիշատակներէն, այս աւերակներուն տեսքէն, որոնք կարծես տակալին կը միան, այնքան պատերուն սեւութիւնը փայլեր կարձկէ, և կը շարունակեմ իմ թաղմանը պոստոս:

Երկամեայ բռնութեանց այս հետքերուն քով, իւրոյն կը տեսնեմ ուրիշ բռնութեանց հետքեր, որոնք կը բացատրեն ինծի ի՞նչ ինչու բազմութիւն բնակիչներ չեն համարձակիր իրենց տունը տեղը դառնալ: Մտաբեր կան որոնք սղոցուած են նախորդ զիւրերը: Նոյն ժամուն, զրացի տունը քարկոծուած և յարձակուած կրած

էր, ու կողպտուած իր պարունակած քանի մը քուրջերէն: Այս յարձակուած կրող թշուառները գեռ կը գողգողային իրենց զղացած սարսափէն:

Պարտեզ մը պարտեցայ, ուր կերտուեմի համար սեղաւորուած էին այն սուզի օրերուն հերոսները, հինգ վեց հոգի: Աւոնցմէ մէկը՝ հերզուլեան հասակով, արիւնուռչտ նայուածքով, ուսուցիկ լանջքով, իր ձեռքովը սպանած էր 40 հայէ աւելի, և զիչեր ցորեկ կը թափուէր այն ընտանիքներու պարտեղներուն մէջ որոնց պետերը սպանած էր, ստեղծած ազգիկով իր զոհերու կիներուն ու աղջիկներուն: Իմ հետեւած ուղիս զիս բուրբովին անոր մօտէն անցուց:

Այս մարդակերպ վաղը, որուն ամբողջ անձը գեռ կարտաբուրէր իր նախճիրներուն հպարտութիւնը, քանի մը ամիսներէ ի վեր կը փնտրուէր ոստիկանութեան կողմէն, իր պատուերներէն մէկը սպանած ու կտոր կտոր ըրած ըլլալուն համար:

Անկէց Ղարալը օղլու թաղը գացի, ուր միայն կին մը մեռած էր: Զինուած բնակիչները ամբողջ օր մը զիմադրած էին մինչև որ Ռուս հիւպատոսին խնդրանքին վրայ, ուսասակատակ մը պաշտպանելու համար

հասած զօրագունց մը, անբռնարարելի պատսպարան մը ապահովեց բուրբ բնակիչներուն որոնք հոն նետուեցան ու կրցան ողջամբ փրկուիլ, մինչ իրենց տունները կը կողպատուէին ու կը հրկիզուէին:

Նշանակելի ոչինչ չկրցայ գտնել ժափիկ թաղի մասին, ուր ոչ մէկ հայ չէ դարձած, և որուն բոլոր տունները գրաւուած են խոյանի երէ:

Կորսար հարիւր քսան մարդ զոհ տուաւ երկար ստեղծ ի վեր պատրաւուած այս ջարդին. ուրիշ 30 հոգիներ որոնք Պարսկաստանի ձամբան բռնած էին, սահմանադիւն քանի մը ժամ միացած խողխողուեցան:

Այս ջարդը նամանաւանդ անոր համար աններելի է որ բնակիչները ամէն խռովութենէ հետո միացած էին և բնաւ զինուած չէին: Բայց աշխատութիւնը զինքը հարստացուցած էր, և, ինչպէս որ կը բացատրէր ընդհանուր կոտորածի մը, տիրող տարրը չէր կրնար հանդուրժել այս լրբերի ճոխութեան տեսքը. հետեւողէս ոչնչանալու դատապարտուած էր ան:

Ք Ր Ո Ն Ի Կ

—)(—

Երեւանէն «Մշակ»ի շրջապատէն զընդհանուր թեմայի մը կը տեղեկանանք թէ Կովկասէ հայրենիք վերադարձող հայերը եւ չեն դարձուցուիր թուրք սահմանագլխէն, եւ թէ այդ մասին եղած տարածայնութիւնները անհիմն են: Քաղաքավարական ընդունելութիւն գտեր են նաեւ վերջին անգամ Բագուէ գացող 500 զաւթականները: Կերեւայ թէ Պոլսոյ մէջ Պ. Չենովիէֆի պնդումները իրենց արդիւնքը ունեցեր են:

«Միւրապետ»ի կը տեղեկանանք թէ վերջերս Ամերիկայէ հայրենիք վերադարձող գաղթականներուն թիւը հասեր է 600ի:

Վաղարշապատէն կը գրեն թէ բարձրագոյն որոշումով կառավարութեան կողմէն սինօքի անգամ նշանակուեր են Եսայի եպիսկոպոսը և Յուսիկ վարդապետը: Այս ընտրութիւնները լատպատուութիւն թողուցեր են միաբանութեան վրայ, որ կը յուսայ այս նոր անդամներուն շնորհիւ Սինօքի գործերը լատվիճակի մէջ տեսնել:

Էջմիածնէն հասած լուրերէն կը տեղեկանանք թէ հայրապետը մտադիր է մտերմ այցելել Նախիջևան, Տաթև և Երևան:

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ տօքթ. Բենիամին Եղաթեան Սօփիայի մէջ փայլուն քննութիւններ անցընելէ ետքը, Պուլկարիոյ մէջ իր արուեստը ի գործ դնել արտօնուեր է:

Տ. Մինաս Զերազի եղբորորդին փոքրիկ Վահանը, 10 տարեկան, իր հօրեղբոր քովէն վերջերս Պօլիս դառնալուն մեծ գծուարութիւնով կարելի եղեր է ոստիկանաց ձեռքէն զայն խել: Բաւական չարչարեր են խելձ փոքրիկը որուն միակ յանցանքը Մինաս Զերազի եղբորորդին ըլլալն է: Վահան զեռ. անկողնոյ կը ծառայէ:

Կարինէն «Սապահ»ի կը գրեն թէ բանտարկեալներուն առողջութեան, ուտելիքին, բնակութեան և բոլոր պէտքերուն հոգ կը տարուի: Թուրքիոյ բանտերը ընդհանրապէս հայոց յատկացուած ըլլալով այս տեղեկութիւնը մեծ շահեկանութիւն ունի մեզ համար: Եւ սակայն մայրաքաղաքին բանտերուն համը առնողները գծուարաւ պիտի հաւատան «Սապահ»ի այդ լուսատես տեղեկութեան:

Երուսաղէմի պատրիարքը օրհնութեան գրքը զրկեր է Պօլիս, այն տեղի եկեղեցիներուն մէջ ի նպաստ Ս. Աթոռին (պատրաստակեր վանականներուն) շրջաբերած պնակներուն համար: Անցեալ Եջ. Ս. Սահակ և

Մերոպ թարգմանիչներուն տարեգարձի օրն էր: Տակաւին յայտնի չէ թէ Պուլկարիոյ և Ռումանիոյ հայ վարժարաններէն քանի՞ն տոնեցին հայութեան այս վեհ գէմքերուն յիշատակը:

Գերման բժիշկներու որոշումով ասկէց ետքը գերմանական ամբողջ հիւանդանոցներու մէջ օտմ. ապուրը պիտի ընդհանրանայ: Գերման-թուրք եղբայրակցութեան մէկ նշանն ալ այս կրնայ սեպուել. և սակայն գերմանացիներուն ասկէց առաջ կերած ապուրները, հիմակուան ապուրը չպիտի կրնան մտնել տալ:

Թամփաի ամերիկեան բանակէն հայ զինուոր մը նամակ մը գրելով «Միւրապետ»ի կը նկարագրէ զինուորական կեանքը զոր շատ հաճելի կը գտնէ: Միայն կը ցաւի որ բռնակի շուրջը փոքրիկ առեւտուրներով հարուստացող հրեայ և իտալացի վաճառիկներուն մէջ բնաւ հայ մը չգտնուիր որ օգտուի այդ հրապարակէն, ուր մէկ հաւելի թը 10 սէնթի կը ծախուի:

Հունգարիոյ մէջ վերջերս ընդարձակ տարածութեան մը վրայ հառելի փոթորիկ մը տեղի ունեցեր է: Ահագին խաշորութեամբ տեղացող կարկուտը և ասոր յաջորդող տեղատարափը բոլոր բերքերը փծացուցեր և ամբողջ գիւղեր աւերակի վերածեր են: Վնասը 15 միլիոն ֆիորին կը հաշուի: Նոյն իսկ Պուտաբէշի պարտէզները ու ծառերը աշնանային տխուր կերպարանք առեր են:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

ԱՀՈՒԼԻ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Սպանիոյ ծովային զօրութիւնը յիս. 22ին կրեց հարուած մը ուսկից ա՛լ չպիտի կրնայ կանգնիլ: Մէրվէրաի նաւատորմը, որ Սպանիոյ ամէնէն գեղեցիկ զրահաւորները կը պարունակէր և միակ միջոցն էր ազգ. պաշտպանութեան, կործաներ փծացեր է ամերիկացի Սամուրն ծովակալին ձեռքով: Աղէտը անհամեմատ կերպով աւելի մեծ է քան Մանիլայինը, ուր Մոնթոյօ ծովակալը փոյտէ հին նաւեր միայն ունէր:

Ամիս մը առաջ երբ Մէրվէրա ծովակալ Ատլանտեան անցաւ ամերիկեան հսկողութենէն խոյս տալով, ամէն մարդ զովասանց զինքը: Բայց յետոյ գէպքերը եկան ցուցուցին որ Մէրվէրաին մուտքը Սանթիակոին նեղուցին ներսը, սխալ մըն էր. անգամ մը իսկ չփորձեց յարձակմամբ դուրս ելլել: Հաչիւ երեք օր առաջ օդը հանել տուաւ նեղուցին բերանը ընկղմած «Մէրիմէ»ը:

բայց շատ ուշ էր: Թշնամին նեղուցին բերանը հաւաքած էր շատ մեծ ուժեր, որոնց չկրցան գիմարել Սպանիացիք:

Իրերու տխուր հեղուկեամբ մը, ան պահուն ուր Մէրվէրաի նաւատորմը ամբողջովին կը քանդուի, Բամարաի նաւատորմը որ Բոն-Սալուէն ճամբայ ելած էր, նորէն հոն կը դառնայ՝ ճամբան շարունակելու անկարող:

Այսպէս՝ պատերազմի բոլոր զծին վրայ քայքայու մ Սպանիոյ համար: Եւ եթէ այս անձկագին բողբոջին սպանիական ժողովուրդը չգիտնայ պահել իր պաղարիւնը, եթէ հակամիտակեան յուղումները և քարտուսկանութիւնը յաղթանակը տանին, Սպանիան անիշխանութեան մատնուելով անկանգնելի կերպով պիտի իյնայ:

Յունիս 22ին հեռագիրները. Մովակալ Տուր կը հեռագրէ թէ Սան.Պրանչիսկօէն մեկնող փոխադրանաւերուն առաջին բաժինը Մանիլա հասեր է: Զօրքերը քաջառողջ են:

Սամուրն ծովակալի մէկ հեռագիրը կըսէ թէ Մէրվէրա ծովակալին սորմիցը ամբողջապէս ջախջախուած է: Բրիթոպալ Քօլօն, Մաուրա-Թէրէզա, Օբուէրաս, Փուսոն և Բլուիօն զրահաւորները քանդուած են: 1,300 սպանիացիք, որոնց մէջ Սերվէրա ծովակալը, գերի բռնուած են:

Սպանիացիք մերժեցին Սանթիակոն յանձնել: Զօրավար Շաֆթըր մինչև երեքշաբթի կէս օր պայմանաժամ տուաւ իրենց:

Ամերիկացիք ընկղմեցին երկու սպան. մարտանաւ և ծանր վնասներ տուին քանի մը թընդանօթակիւններու Մանիլայի լիճի մօտ:

Հոնկ-Քոնկէն կը գրեն թէ ամերիկեան օժանդակ զօրքերը Բաթիթէ հասած են յունիս 18ին: Ճամբան Լաուօն կղզիները գրաւեր են և զօրք ձգեր են հոն, սպանիացի կառավարիչն ու պաշտօնատարները բռնելէ ետքը:

Մերվէրա ծովակալը բազուկէն վերաւորուեր է և բանտարկուած կը գտնուի «Կլօնտէս» թըր»ի մէջ: Ծովակալը յայտարարեր է որ ծովուն բացը կուրի մը վտանգները և մեռնիլը նախամիջար սեպել է քան թէ ծուղակի մը մէջ մեռնիլը:

Ամերիկայի ծովային նախարար Պ. Լօնկ իր շնորհաւորութիւնները զրկեր է ծովակալ Սամուրնի և Միլու ու Շաֆթըր զօրավարներուն:

Ուաշինկթընի պատերազմական վարչութիւնը կը մազթէ որ Սպանիոյ էն կարեւոր ծովեզեր-

եայ քաղաքներուն ուժակոծումը շուտով սկսի:

Կ Ր Է Տ Է

Զորս գեապաններու կողմէն ընդունուած Կրէտէի առժամեայ կանոնագրին համաձայն, կղզիին ներքին կարգապահութիւնը պիտի յանձնուի կրէտական ազգ. ժողովի յանձնախումբին, ծովակալներու հսկողութեան ներքեւ: Այս վերջինները իրաւունք պիտի ունենան պաշտօնանկ ընել յանձնախումբը, հեծեալ ոստիկանները կազմակերպել և ծովեզերեայ քաղաքներու վարչութիւնները հաստատել:

Ռուսիոյ հրահանգով, այս ծրագիրը Դրան կողմէ պիտի ներկայացուի Հոմարի և Պերլինի գահիճներուն:

ՊՕՐՍԱ

Վառնա 25 Յունիս
ՊՈՒՂՏԱՅ
Վազօն եօգ, լիպրա 47—51, հէքթօլ 8—8.20 ֆրանք
Արապա, լիպրա 47—55 հէքթօլ 7—8 ֆրանք

ԱՐԲԱ
Լիպրա 38—40 հէքթօլ 5.50 ֆրանք

Առապա մուամէլիսի նարուէն 21 ֆրանք հիսապը իւէ սիր.
Կիւնտէ 2—3 արապա սյուզասյ, 1—2 արապա արբա, կէլմէքտէ սիր:

ԳՈՐԾԱԿԱՏԱՐ ԵՒ ՅԱՆՉԵԱԿԱՏԱՐ

Գիրք ամէն լեզուէ, թողթ, միւլան եւ ամէն կարգի դասական առարկաներ, ուզողաց կը զրկուի փութով: Հայ եւ այլ լեզուաւ թերթերու բաժանորդ գրուել ուզողաց զիւրութիւններ, Բէսթէնէլէն եւ այլ տեղերէ, Ամերիկա՝ եւ այլ ուրեք գնալ փափագողաց խորհուրդ, զիւրութիւն եւ ծանօթութիւններ: Հասցէ՝

Paul Gigerian, strada mangalia No. 141 Constanta (Roumanie)

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ԶԲՈՍԱՐԱՆ

ՀԱՃԻ ԲԱՆԱԲՈՒՆ ՃԻՇԵՐ ԴԵՄԸ
Կը բանեցուցէ Պ. Տիգրան Թիւֆեկլի-նեան և ընկեր

Արհեստին մէջ կատարելութեան հասած երկատարող հայու մը ձեռամբ սարքուած այս հովասուն, մաքուր ու գեղջական հաստատութիւն ոչ միայն եւ մեծ խթան մը կը լրջայ որ հայ ու օտար փափակները իրենց գարնանային ու ամառնային ժամադրավայր մը ընեն զայն զբօսնելու և ճաշելու, Պոնտոսեան արտօնարքեր հովերուն ու Սեւ ծովի կապոյտ տարածութեան առջեւ:

Հակառակ այս հրապուրիչ առաւելութիւններուն, յաճախողները պիտի գտնեն յոյժ զիւրամտայնի գիւներ թէ ըմպելիքի թէ կերակուրների մասին: 14

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնաի մէջ կը վաճառուի Մուսալլա, թահմիզ կէտղիպէօյի քեանի խանութը, և Ապտիւրրահման մզկիթին գէմը հայկական գրատունը, Ա. Զարբանէլեանի քով:

Печатница «Взаимность» Варна.